

ԳԼՈՒԽ ԺԷ

Բարեբախտաբար ժամանակը ձմեռ էր, այդ սոսկալի արաբական կլիմայի տաքը չի կար, եւ արեւը երբ ելաւ, մեր երեք ճանապարհորդէք սիրով ողջունեցին նորա ելքը, թեպէտ աւելի սիրելի Գազրիկ տեսնելով այն միջոցին Սուրենի քունը՝ դարձաւ ըսաւ Գրիգորի.

– Յիրաւի, իշխան, քու քեռին զարմանայի մարդ է, այս մեր փախուստը եւ ամեն պէտքերը ինչպէ՛ս մտածեց ու պատրաստեց:

– Ինչչա՞փ ժամանակ է, որ դու այս իր խորհուրդը եւ պատրաստութիւնքը գիտէիր:

– Տարի մը կայ եւ աւելի, որ կէսօրէն վերջ սաստիկ տաք ատեն, երբ ամեն մարդ թուլցած շարժելու կարողութիւն չունէր, դիպուածով մտայ այդ կիսաւեր սենեակը եւ տեսայ իշխանը երկայն փայտի մը օգնութեամբ այդ մեծ քարը շարժել կը ջանար, եւ քրտինքը ճակատն ի վար կը վազեր: Երբ զիս տեսաւ, «Գազրիկ, դու գաղտնիք պահող եւ ուժով մարդ ես, եկ ինձ օգնէ»– ըսաւ. իսկ ես, մեղա-մեղա՞, որ այդպիսի քարեր շատ վերուցեր եմ, մեծ զրուցել չլինի, մեր գիւղի շրջակայքը եւ Բագրեւանդայ մէջ կրնամ ըսել թէ քիչ մարդ կար, որ ինձ չափ ծանր բան կարենար վերցնել, «կաց իշխան», ըսի, փորձեցի եւ. տեսայ, որ քարը կը շարժի՝ ուժ տուի եւ սահեցուցի. «Ապրիս, Գազրիկ»,– ըսաւ եւ վար նայեցինք, որ մարդաչափ փոս մը միայն կար առաջնիս. ինձ սպասել հրամայեց եւ պահպանութիւն ընել. ինք մտաւ ներս. տեսայ, որ ժամի չափ անցաւ եւ իշխանը չէր երեւեր, վախը զիս առաւ թէ վտանգի հանդիպեցաւ, ուստի ես էլ իջայ, որ նայիմ՝ եւ տեսայ թէ երկու ճամփայ կար, մէկը դէպի ներս տան մէջ կը տանէր՝ իսկ միւսը դէպի դուրս: Իշխանն անշուշտ դէպի դուրս գնաց կարծելով՝ այն ճամփան գնացի խարխափելով եւ վերջապէս երբ երկուքի տեսայ բաժնուած այդ ստորերկրեայ ճամփան՝ ետ դարձայ, եւ հակառակ ուղղութիւնը բռնեցի, վերջապէս լուսոյ տկար գիծ մը երեւեց, եւ իշխանը տեսայ, որ պատի մը կռթնած կեցեր դէպի լոյսը ներս կը նայեր: Երբ զինք ողջ գտայ՝ փառք տուի աստուծոյ, վասնզի իմ վախս այն էր, որ օձի, կարճի, գահավէժի վտանգ մը յանկարծ իրեն հանդիպած չլինի. ուստի ետ դարձայ նոյնպէս զգուշութեամբ, որ ոտքի շղթայիս ձայնը չի լսուի: Իշխանն էլ ետեւես հասաւ եւ ելանք դուրս. դարձեալ քարը տեղաւորեցի, եւ ոչ հարցուցի ի՞նչ էր այդ տեղը, իսկ ինք քանի մը անգամ մտաւ հոն, մինչեւ վերջին անցեալ գիշեր եւ ոչ հարցմունք մ՛ըրի: